ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4.1-2-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. փետրվարի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 6 (վեց) հայտ՝

- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի,
- «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի,
- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի
- «Արփա» Բնապահպանական Հիմնադրամի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 6 (վեց) կազմակերպության՝

- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի,
- «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի,
- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Արփա» Բնապահպանական Հիմնադրամի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի 2.4. կետի պահանջներին:

Մասնավորապես՝

- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտում կցված է տարածքի վարձակալության պայմանագիր, առանց դրա հիմքերը հավաստող փաստաթղթերի (հասկանալի չէ վարձակալության հանձնվող տարածքը արդյո՞ք որևէ իրավունքով պատկանում է վարձատուին),
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտի՝ Armeps ծրագրի պիտանելիության չափորոշիչներ բաժնում բացակայում է ծրագրի առաջարկը, առկա գույքի և սարքավորումների ցանկը ստորագրված չէ,
- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտի՝ Armeps ծրագրի տեխնիկական չափորոշիչներ բաժնում բացակայում է ծրագրի առաջարկը,
- «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտում՝ տարածքի սեփականության վկայականի կամ վարձակալության պայմանագրի, կամ տարածքի շահագործման թույլտվության փոխարեն կցված է Սևանի քաղաքապետարանի աշխատակազմին պատկանող տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր, կցված չէ առկա գույքի և սարքավորումների ցանկը, կցված չէ գործողությունների ժամանակացույցը,
- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի հայտում ստորագրված չէ առկա գույքի և սարքավորումների ցանկը,
- «Արփա» Բնապահպանական Հիմնադրամի հայտի՝ Armeps ծրագրի պիտանելիության չափորոշիչներ բաժնում կցված չէ գործողությունների ժամանակացույցը, տեխնիկական բաժնում բացակայում է գործողությունների ծրագիրը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 6 (վեց) կազմակերպության՝

- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի,
- «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի,

- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Արփա» Բնապահպանական Հիմնադրամի

կողմից ներկայացված հայտերը:

2. Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը լուծարել:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան -

Ա.Մկրտչյան -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Ա.Սողբաթյան -

Հ.Սահակյան -

Լ.Պետրոսյան -

Շ.Հովսեփյան -